65-ԱՄՅԱ ԳԻՏՆԱԿԱՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ
A 65-YEAR-OLD SCIENTIST AT THE CROSSROADS OF HISTORY
65-ЛЕТНИЙ УЧЕНЫЙ НА ПЕРЕКРЕСТКАХ ИСТОРИИ

Արդի հայ պատմագիտության ականավոր ներկայացուցիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Աղասու Մելքոնյանի համար հոբելյանական տարի է. լրացավ նրա ծննդյան 65-ամյակը:

Գիտնականը ծնվել է 1961 թ. փետրվարի 16-ին Վրաստանի Ախալքալաք քաղաքում հայկական միջավայրում ճանաչված մտավորական, լրագրող և հրապարակախոս Աղասի Մելքոնյանի ընտանիքում: Միջնակարգ դպրոցն ավարտել է 1977 թ. և ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ՝ ավարտելով 1982 թ.: Գիտության ասպարեզ ոտք է դրել 1982–1985 թթ.՝ անցնելով նույն ուսումնական հաստատության ասպիրանտուրայի շրջանը: 1989 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ակադեմիկոս Ս. Երեմյանի ղեկավարությամբ՝ «Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դ. առաջին երեսնամյակին» թեմայով, որի համար նրան շնորհվել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հետագայում շատ ավելի լայն հունով իրականացվող նրա հետազոտություններն ընդգրկեցին նաև այս թեմայի շարունակությունը, որը մեր պատմագրության մեջ հանգեցրեց հիմնարար արդյունքների. «Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին» թեմայով դոկտորական ատենախոսությունը երիտասարդ գիտնականը պաշտպանեց 2002 թ. ապրիլին: Գիտամանկավարժական բնագավառում ունեցած իր վաստակը 2005 թ. նրան բերեց պրոֆեսորի գիտական կոչում և այդուհետ լայն ճանաչում գիտական և մտավորական շրջաններում: 2006 թ. դեկտեմբերին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 2014 թ. դեկտեմբերին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Ա. Մելքոնյանն աշխատանքային գործունեությունը սկսել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում՝ մեկնարկելով լաբորանտի պարտականություններից և 2002 թ. հասնելով նույն ինստիտուտի տնօրենի պաշտոնին, որ նա վարեց մինչև ս./թ. փետրվար: Ներկայումս Ա. Մելքոնյանը շարունակում է իր

գիտակազմակերպչական գործունեությունը՝ ինստիտուտի բաժնի վարիչի պաշտոնով:

Ա. Մելքոնյանն անցել է աշխատանքային պատկառելի ուղի, որին նվիրել է և շարունակում է նվիրել ողջ ավյունը՝ հարստացնելով հայագիտական ուսումնասիրությունները իր բեղմնավոր աշխատանքի արգասիքներով: Հավելենք, որ գիտնականն իր տասնամյակների մեծ փորձն ու իմացականությունը այսօր փոխանցում է բուհական սերունդներին՝ երիտասարդական զարմանալի եռանդով և նվիրվածությամբ:

Պատմագիտական ընդարձակ և բազմաշերտ ընդգրկումներ ունեն Ա. Մելքոնյանի աշխատությունները, որոնք վերաբերում են Արևմտյան Հայաստանի ժողովրդագրությանը, պատմաքաղաքական ու մշակութային խնդիրներին, ազգային-ազատագրական շարժումներին և դրանց գործիչներին, Օսմանյան Թուրքիայում հայերի սոցիալ-տնտեսական կացությանը, բնաշխարհի և սփյուռքի ազգային կյանքին և այլն: Որպես կանոն՝ պատմաբանը հենվում է ժամանակակից տեսություններից բխող վերլուծությունների, փաստերի և իրողությունների վրա՝ արժեքավորելով հայոց պատմությունը և՛ որպես հետազոտական ուրույն բնագավառ՝ իր առանձնահատկություններով, ինքնության հատկանիշներով ու որոշակի իրողություններով, և՛ որպես համաշխարհային պատմության բաղկացուցիչ մաս: Հետազոտական այս երկու բնագավառը նա դիտարկում է փոխադարձ սերտաճումների և ընդհանուր օրինաչափությունների հենքի վրա, որով նրա ուսումնասիրությունները ստանում են առարկայական որոշակի բնույթ: Այս տեսակետից նրա կատարած պատկառելի աշխատանքը հաճախ դրսևորվում է նոր ուղղությունների ձևավորմամբ ու սահմանումներով: Հիշարժան է Ա. Մելքոնյանի լուրջ վաստակը մեզանում պատմական ժողովրդագրության (դեմոգրաֆիա) ուղղությունը հիմնադրելու բնագավառում: Մինչ նրա կողմից այս նոր ուղղության ձևավորումը որպես հայեցակարգ, մեր գիտական միջավայրում այն ի հայտ էր գալիս տնտեսագիտական հետազոտություններում՝ զուտ տնտեսագիտական խնդիրների նարատիվով և օրինաչափությունների վերհանմամբ՝ բնականաբար, պատմագիտական ոչ բավարար նկարագրի տեսքով: Ա. Մելքոնյանի աշխատություններում հաղթահարվում է նշված սահմանագիծը, և հիմնահարցի մեթոդական մշակումը բերվում է պատմագիտական բնագավառ՝ դրվելով ամուր հիմքերի վրա: Դրա արդիական նշանակությունը առավել ևս կարևորվում է հիմնահարցի թուրքադրբեջանական նենգափոխման պայմաններում, որոնցում տիրապետողը ժողովրդագրական խնդիրների ազգայնական և պանթուրքական մեկնաբանություններն են: Սրա բացահայտմամբ ևս հայրենական պատմագիտության մեջ Ա. Մելքոնյանը մուտք է գործում ուղղակի շքամուտքից՝ սեփական կնիքը դնելով հայոց պատմության նոր և նորագույն շրջանների հետազոտական յուրացման ասպարեզում: Այդպիսին է նրա առաջին, բայց հղացմամբ և կատարումով անհերքելիորեն տպավորիչ՝ թեկնածուական ատենախոսության վերամշակված ու լրացված աշխատությունը՝ «Էրզրումի նահանգի հայ ազգաբնակ-

չությունը XIX դարի առաջին երեսնամյակին» (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» (Ե., 1994, «Գիտություն» հրատ., 179 էջ) վերնագրով: Աշխատանքը նվիրված է նահանգի հայ ազգաբնակչության տեղաբաշխման, էթնիկ տեղաշարժերի և դրանց հիմքերին առնչվող այլ խնդիրների: Հեղինակը հատկապես ուշադրություն է դարձրել իր եզրափակիչ դրույթների հստակեցմանը՝ նահանգի ազգաբնակչության մեջ մեծամասնություն կազմող հայերի համար ստեղծվում են նոր քաղաքական պայմաններ, որոնք իրենց բացասական հետևանքներն են թողնում նրանց քանակի և տեղաշարժերի դինամիկայի վրա: Նահանգում հետզհետե ուժեղանում են թուրքալեզու և իրանալեզու ժողովուրդների ներհոսի միտումները՝ որպես ընդհանրական մի երևույթ՝ կազմելով Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական տեղաշարժերի զարգացման կարևոր առանձնահատկությունը:

Պատմաբանի բազմամյա հետազոտությունների արդյունքն էր նրա հրատարակած «Հայոց պատմություն» դասախոսությունների ձեռնարկը (Ե., «Հայագիտակ» հրատ., 1998, 277 էջ), որը, արծարծած հիմնախնդիրների հրատապությամբ հանդերձ, վկայում էր ոչ միայն նրա հետազոտությունների ներքին կապակցվածության, այլև, սեփական մոտեցումների ու լուծումների կիրառական անհրաժեշտությամբ պայմանավորված, պատմաբանների նոր սերնդին նոր տեսակետները փոխանցելու կարևորության մասին: Ժամանակագրական սահմաններով ձեռնարկն ընդգրկում է հայոց պատմության ուրվագծային ընթացքը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Այն պարունակում է նաև մեր պատմագիտության ձեռքբերումները հատկապես մի շարք վիճահարույց հարցերի վերաբերյալ: Այստեղ պետք է առանձնացնել պատմական իրականություն դարձած նոր իրողությունների գնահատականը, որպիսիք են Արցախյան շարժման նոր փուլը, Հայաստանի անկախ պետականության հռչակումը՝ Անկախության հռչակագրի իրավաքաղաքական հիմքերի վերլուծությամբ:

Ա. Մելքոնյանի ուսումնասիրությունները սերտորեն աղերսվում են նրա նախասիրությունների ու կենսագրական անհատականության հետ՝ ոչ սակավ դեպքերում սնուցիչ հող դառնալով նրա հետազոտական ավյունին: Ծագումնաբանորեն կապված լինելով իր նախնիների և պատմական հայրենիքի՝ Կարինի տարածաշրջանի հետ՝ նա արյան կանչով արժանին է հատուցում Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչության ժողովրդագրական պատմությանը: Հիմնահարցի կենսականությունը լրացումներ էր պահանջում՝ թելադրելով հետազոտական նոր խոսքի անհրաժեշտություն: Այդպիսի միջակա օղակ դարձավ նրա աշխատասիրությամբ Ե. ավագ քահ. Գեղամյանցի «Կարապետ արքեպիսկոպոս. կենսագրություն» շարադրանքը՝ իր առաջաբանով և ծանոթագրություններով (այս գործը ժամանակին՝ 1870-ական թթ., տպագրվել էր «Փորձ» ամսագրում): Խոսքը վերաբերում է Կարինի հոգևոր առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսին, որի անունը կապվում է Կարինից Անդրկովկաս՝ Ջավախք անցած հայերի գաղթի կազմակերպման հետ: Եվ վերջապես, նույն հիմնահարցին են նվիրված Ա. Մելքոնյանի հաջորդ երկու աշխատությունները:

Դրանցից առաջինը՝ «Ջավախքի պատմության ուրվագծեր» (Ե., 1999, «Գիտություն», 104 էջ), նվիրված է Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Ջավախք գավառի պատմությանը, Ախալքալաքի գավառի, ինչպես և հարակից Ախալցխայի և Ծալկայի շրջանների պատմությանը՝ մինչև խորհրդային ժամանակաշրջան: Ուշադրություն է դարձված հատկապես 1918–1921 թթ. ընդգրկող ժամանակահատվածի պատմությանը: Այս գործը հագեցած է նորահայտ փաստաթղթերով ու վավերագրական նյութերով, որոնք հիմնավորում են հիմնահարցի նորովի լուսաբանումները ժողովրդագրական բնութագրումների տեսակետից: Եվ վերջապես, հիմնահարցն իր յուրահատուկ զարգացումը ստացավ Ա. Մելքոնյանի «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» (Ե., 2003, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 542 էջ) աշխատության հրատարակությամբ: Հետազոտական նյութն այստեղ օգտագործված է ժամանակագրական սահմանների ընդլայնմամբ (Ջավախքի պատմության հին և միջնադարյան ժամանակահատված, նոր վերհանումներ պատմության հանգրվաններում) հատկապես այն բովանդակային ուղղություններում, որտեղ լուսաբանվում են 1918 թ. թուրքերի՝ Ախալքալաք ներխուժումը, տեղի հայերի ողբերգական դրությունը, նրանց հանդեպ վրացական իշխանությունների վարած բնավ ոչ բարիդրացիական քաղաքականությունը, հայ-վրացական միջպետական հարաբերությունները և այլն: Աշխատության մեջ քննարկվում են պատմագիտական գրականության մեջ սակավ կամ գրեթե չշրջանառվող այնպիսի հարցեր, որպիսիք են 1918 թ. սկզբին Ախալքալաքի և Լոռու համար սկսված հայ-վրացական պատերազմը և դրան առնչվող ներքին ու արտաքին բնույթի հանգամանքները, որոնք ավարտվեցին անգլիացիների միջամտությամբ՝ իրենց թողած քաղաքական հետևանքներով: Համոզիչ վերլուծություններով ցույց են տրվում Խորհրդային Հայաստանի մեկուսացված կացությունն ու տրամաբանությունն այս հարցում, երբ ազգայնականությունը հանդես էր գալիս ինտերնացիոնալիզմի շպարով: Պատմաբանը իրերը կոչում է իրենց անուններով, երբ ցույց է տալիս, որ վրաց-ադրբեջանական բոլշևիկ մեծամասնությունը, համաձայնեցված միասնական գործելակերպով, 1921 թ. հուլիսին հասավ Ախալքալաքի և հայկական այլ տարածքների բռնակցմանը Վրաստանին և Ադրբեջանին: Նույն տարվա նոյեմբերի 6-ին, եզրափակում է հեղինակը, կողմերի միջև կնքվեց հայ-վրացական պայմանագիր, որը մասնակի փոփոխություններով գոյություն ունի առ այսօր: Ուշագրավ են նաև այս ամենի հակազդեցության լուսաբանումները, ինչպես, օրինակ, 1925 թ. Ախալքալաքի հայության պահանջները՝ Ախալքալաքը Հայաստանին միացնելու վերաբերյալ, որոնք մերժեց խորհրդային իշխանությունը: Սրան ի մոտո աղերսվում է խորհրդային շրջանի պատմության հետնախորքում մնացած գաղտնի ծառայությունների գործունեության վերաբերյալ Ա. Մելքոնյանի և պրոֆ. Վ. Ղազախեցյանի հրատարակած «Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում, 1922–1929 թթ.» փաստաթղթերի ժողովածուն (ռուս., Ե., 2008, «Գիտություն» հրատ., 352 էջ): Ժողովածուի նյութերը փաստական անգնահատելի տեղեկատվություն են պարու-

նակում ժամանակի խորհրդային իշխանությունների՝ Հայաստանի նկատմամբ վերաբերմունքի և վարած քաղաքականության մասին:

Խորացնելով պատմական ժողովրդագրության բնագավառում հետազոտական ընթացքը՝ Ա. Մելքոնյանը հրատարակեց իր հաջորդ աշխատությունը՝ «Հայաստանի պատմության և ժողովրդագրության հարցեր» (Ե., 2011, «Միտք» վերլուծական կենտրոն, 455 էջ) վերնագրով: Այստեղ առավել լայն հայեցվածքով ու նոր մշակումներով են դիտարկվում նրան ծանոթ հիմնահարցերը՝ Ջավախքի պատմություն, Հայոց ցեղասպանություն, Հայ դատի հիմնահարց, թուրք-ադրբեջանական կեղծարարության մեթոդաբանական հիմքեր և այլն: Տարբեր հիմնահարցերով ներկայացրած իր անդրադարձները, որքան էլ ձևականորեն տարանջատ, նրան հնարավորություն են տալիս լուրջ ընդհանրացումներ անելու իր աշխատություններում առկա թեմաների վերաբերյալ: Այդպիսին է այս աշխատության մեջ նրա մի եզրակացությունը Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչության տեղաշարժերի վերաբերյալ, որ առհասարակ կարելի է վերագրել հայության ճնշող և ծանր պատմական միջավայրին. հայերն իրենց գոյատևման խնդիրը, նկատում է նա, լուծում էին երկու եղանակով՝ զինված պայքար և արտագաղթ, արդյունքը՝ հայ բնակչության թվաքանակի կտրուկ նվազում և հայաթափում:

Ա. Մելքոնյանի «նախասիրած հարցեր» ձևակերպումը, որ օգտագործեցինք վերը, ունի բավականաչափ պայմանական նշանակություն հատկապես հետազոտական արձակ շառավղի համատեքստում, որտեղ հաճախ ամփոփվում են նրա փաստական հետաքրքրությունները: Պատմությունից դեպի իրականություն, պատմականից դեպի այժմեականություն վիթխարի տարածքը նա անցնում է առանց շնչառության լսելիության և բնականոն սահուն ընթացքով. նրա գրչի տակ պատմությունը վերակերպավորվում է արդիականության իմաստով, և արդիականությունը՝ պատմական ուսանելի ճշմարտություններով: Հիրավի, Մելքոնյանի բազմաթիվ հոդվածներն ու ելույթները շնչում են ոչ միայն այսօրվա Հայաստանի, նրա պետականության և մեր ժողովրդի համար այլ հրատապ հարցադրումներով ու անդրադարձներով, այլև դրանց լուծումներին ուղղված անհրաժեշտ առաջարկներով: Այս տեսակետից ևս պետք է բնութագրել նրա «Հայոց պատմության դասերն ու պատգամները» հոդվածների, ելույթների և հարցազրույցների ժողովածուն (Ե., 2013, ՀՀ «Գիտություն» հրատ, 631 էջ): Ժանրային տարատեսակության այս պայմաններում նա առաջ է քաշում ցեղասպանության հիմնահարցի ռազմավարական զարգացման նոր փուլի անհրաժեշտության խնդիրը, այն անշարժության կետից առաջ մղելու ուղղությունը: Ցեղասպանության ճանաչման փուլը, նկատում է նա, «վաղուց արդեն անցել է, և մենք պետք է շեշտադրենք հատուցումը և անպայմանորեն որևէ երկրում պառլամենտական մակարդակում նման խնդրի ճանաչմամբ չբավարարվենք և բանաձևումների մեջ հասնենք նաև հատուցման գաղափարին» (էջ 25): Ա. Մելքոնյանը առաջ է քաշում Արևմտյան Հայաստանից զրկվելու դիմաց նյութական կամ առարկայական հատուցման խնդիրը: Սրա հետ

կապված՝ հիշենք, որ ժամանակին և ամուր հիմնավորումներով Ա. Մելքոնյանը բացասական դիրք ընդունեց այսպես կոչված հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի, թուրքական կողմի առաջարկած՝ պատմաբանների գիտական բանավեճի, խնդիրը քաղաքականությունից գիտական հարթակ փոխադրելու թուրքական առաջարկների նկատմամբ: Այդ կնշանակեր ծայրահեղորեն հակոտնյա կողմերի միջև հարցը թաղել անպտուղ և անվերջանալի բանավեճերի ասպարեզում: Թուրքական հասարակությունը, նկատում է նա, պատրաստ չէ որևէ քայլ անգամ անելու ցեղասպանության ճանաչման հարցում, և մյուս կողմից՝ հայ հանրությունը մերժողական կեցվածք ունի նման անարդյունավետ վեճերի հանդեպ: Սկզբունքային այս դիրքորոշմամբ Ա. Մելքոնյանը հիմնավորեց իր առարկությունները Ցյուրիխի հայ-թուրքական համաձայնությունների դեմ՝ դրանցում տեսնելով հայության կենսական շահերին հակասող ձևակերպումներ: Մասնավորապես. այդ համաձայնագրերում առկա է մի կետ, նկատում է նա, որն ուղղակիորեն խաչ է քաշում Սևրի դաշնագրի վրա՝ վերաբերելով Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի փաստացի ճանաչմանը:

Ա. Մելքոնյանին խորապես մտահոգում է Հայաստանի պետականության պահպանության և ամրապնդման հիմնահարցը, որն զգացնել է տալիս նրա բոլոր աշխատություններում և իր մշակած հայեցակետերի ընդհանրության մեջ: Այս ժողովածուում ևս մեր ժողովրդի պատմության մեջ նա շրջադարձային է համարում 1918 թ. մայիսի 28-ը, որն ապահովեց «հայոց պետականության շարունակականությունը»:

Ա. Մելքոնյանը ցեղասպանության թեմային է մոտեցել իրավաքաղաքական մեկնակետից և միևնույն ժանրային բնույթն ունեցող «Ցեղասպանություն և հայրենազրկում» (աշխատություններ, հրապարակումներ, մամուլին տրված հարցազրույցներ) ժողովածուում («Զանգակ» հրատ., 438 էջ): Այստեղ նոր կողմերով է լուսաբանվում հայ-թուրքական արձանագրությունների անընդունելիության հարցը (որի պաշտպանությամբ նա հանդես էր եկել Ազգային ժողովում 2009 թ. հոկտեմբերի 1-ին): Ա. Մելքոնյանը առաջադրում է ցեղասպանության քարոզչությանը հետևող նոր փուլի հիմնավորումը՝ «Հատուցում պահանջելը նաև կանխարգելիչ գործողություն է», «Տեղի է ունեցել ոչ միայն ցեղասպանություն, այլ նաև հայրենազրկում», «Հայրենազրկում եզրույթի իրավական ձևակերպման անհրաժեշտությունը» և այլ վերտառությամբ բազմաթիվ հիմնախնդիրներ:

Հայ արդի պատմագիտության մեջ տեսական և բովանդակային հարցերը առաջնային նշանակություն են ստանում Ա. Մելքոնյանի «Հայոց պատմության ակնարկներ» աշխատության (Ե., 2012, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 411 էջ) մեջ, որն ընդգրկում է հայոց ամբողջական պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև XX դ. վերջը: Հեղինակն ընդգծում է հատկապես համահայկական միասնական դասագրքերի (պատմության, լեզվի ու գրականության, մշակույթի) ստեղծումը՝ հայաստանակենտրոն մտածողություն և պետականության զգացողություն ձևավորելու որոշակի նպատակադրմամբ: Պատ-

մագիտական նշանակալի արժեք է ներկայացնում Ա. Մելքոնյանի առաջադրած՝ Հայաստանի պատմության ժամանակագրական բաժանումը (հին, միջնադարյան, նոր, նորագույն ժամանակաշրջաններ), որ ստուգիվ համապատասխանում է միջազգայնորեն ճանաչված ժամանակագրական սահմանաբաժանումներին: Ավելացնենք, որ այս աշխատության ժամանակագրական կառուցվածքը ևս (ըստ գլուխների բաժանումը) հենվում է նույն սկզբունքների վրա:

2000-ականների առաջին տասնամյակների իր հոդվածներն ու զեկուցումները Ա. Մելքոնյանն ամփոփել է «Պատմագիտական հետազոտություններ վերնագրված նյութերում» (Ե., 2021, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 488 էջ): Հեղինակը այս անգամ նույնպես շոշափում է մեր պատմության ու քաղաքականության և հարակից շատ հարցեր, որոնց միավորում են հիմնախնդիրների ներքին, տրամաբանական փոխադարձ կապն ու այժմեությունը: Որպես հեղինակի երկարամյա հետազոտությունների առարկա՝ կարելի է առանձնացնել այստեղ ընդգրկված նրա մի քանի աշխատությունները՝ «Հայոց պետականության պատմափուլերը», «Հայոց պատմության նոր պարբերացման խնդիրները», «Արցախը հայոց պետականության պատմության հոլովույթում», անգլերեն և ռուսերեն հոդվածներն ու զեկուցումները: Գրքի վերջում զետեղված է կյանքից անժամանակ հեռացած, տաղանդավոր պատմաբան Համլետ Հարությունյանի «Երևանի նահանգի ժողովրդագրական պատկերը, արհեստներն ու առևտուրը» գրքի (Ե., 2020, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ) համար որպես խմբագիր հանդես եկած Ա. Մելքոնյանի առաջաբանը՝ Հայաստանի զույգ հատվածների ժողովրդագրական պատկերի վերհանման գիտական նշանակության մասին:

Վերը հիշված՝ հայոց պետականության վերաբերյալ լուսաբանումներում Ա. Մելքոնյանը հանդես է գալիս պատմափուլերի վերաբերյալ հիմնարար առանձնացումներով: Նա հիմնավորապես վերանայում է հայ ժողովրդի պետականազուրկ լինելու վերաբերյալ անհիմն տեսակետը՝ առաջարկելով նոր հայեցակարգ, ըստ որի՝ ստեպ կործանվող հայկական միասնական թագավորություններին հետևել են տարածաշրջանային թագավորությունները, իշխանապետությունները, մելիքությունները և այլ կազմավորումներ, որոնք «գրեթե բոլոր պատմափուլերում պահպանել են հայկական պետականության ընդհանուր շղթան» (էջ 170):

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի՝ Ա. Մելքոնյանի գլխավորության ողջ ժամանակահատվածում ակադեմիայի պատմաբանները Հայաստանում և նրա սահմաններից դուրս օտար լեզուներով հրատարակել են նորագույն պատմագիտական միտքը ներկայացնող բազմաթիվ աշխատություններ, որոնց գիտական արդյունքները պատիվ կբերեին որևէ երկրի. այդ մասին են վկայում արտասահմանի շատ գիտնականների անաչառ գնահատականները:

Մեզանում, սակայն, պատմական գիտության հանդեպ կա մի հայտնի չափով քամահրական վերաբերմունք, որի պատճառը, կարծում եմ, այն է, որ

արդի պատմաբանների վրա մեքենաբար տարածում են խորհրդային պատմագիտության մեղանչումները (գիտության, հատկապես հասարակական գիտությունների ենթարկումը քաղաքականությանը):

Պետք է խոստովանել, որ հանրությունը հույժ անբավարար է իրազեկվում արդի պատմագիտության ձեռքբերումների մասին: Արդյո՞ք մեր հանրությունը բավարար չափով տեղեկացված է, որ Ա. Մելքոնյանի տնօրենության տարիներին է հրատարակվել Հայոց պատմության բազմահատորյակը՝ ժամանակակից հայ պատմագիտական մտքի կենսունակության վկայությունը: Թույլ տվեք կասկածել:

Հոբելյարի ներողամտությունն եմ հայցում թեմայից շեղվելու համար՝ անկեղծորեն հավատալով, որ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը այսուհետև ևս իր անբասիր շնորհներն ու փորձառությունը ի սպաս կդնի հայրենի պատմագիտության անդաստանում: Վաթսունհինգամյա վաստակավորին ի սրտե ցանկանում ենք առողջություն, երկար տարիների կյանք ու կորով արգասաբեր աշխատանքում:

Ալբերտ Խառատյան
Albert Kharatyan
Альберт Харатян

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Corresponding Member of the NAS RA
Член-корреспондент НАН РА

Պատմության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of History, National Academy of Sciences, Armenia
Институт истории, Национальная академия наук, Армения

albert.kharatyan@academhistory.am

DOI: 10.53548/0320-8117-2025.2-324